

եւ քննախօսական կանոններու միջոցով, բոլոր մասնակիցներուն կողմէ եւ անոնց համաձայնութեամբ հաստատուի ու որպէս բարոյական օրէնք ընդ-հանրացուի:

➤ Ն. Հէօրստեր

Հէօրստեր, որ Գերմանիոյ մէջ յայտնի բարոյագետ մըն է, կը քննադատէ Կանտի *անպայմանական հրամայականը*, իր «*Բարոյագիտութիւն եւ շահագրգռութիւն*» (2003 թ., գերմ. բնագիր՝ „Ethik und Interesse“) երկին մէջ: Հէօրստերի համաձայն.-

- առաջին՝ կարելի չէ անհատի մը անձնական կանոնը (մաքսիմ), ընդհանրացնել, որովհետեւ ան շատերու համար անընդունելի կրնայ ըլլալ. եւ
- երկրորդ՝ բարոյական վարմունքի համար անհրաժեշտ նկատուող *այլասիրութիւնը* (Altruism) հաւասարապէս առկայ չէ բոլոր մարդոց մօտ, որոնք գանազան շահագրգռութիւններ կրնան ունենալ:

➤ Մ. Զ. Սինգեր

Սինգեր, իր «*Ընդհանրացումը բարոյագիտութեան մէջ*» (1961 թ., անգլ. բնագիր՝ „Generalization in Ethics“) երկին մէջ, կը քննադատէ Կանտի բարոյական խստապահանջ դիրքը՝ *անպայմանական հրամայականի* առնչութեամբ: Սինգեր, խօսուն օրինակով մը կը ներկայացնէ երկու ընդունուած մաքսիմներ.- «ստախօսութեան» օրինակը եւ հոն յիշուած «մարդկային կեանքի փրկութեան» հարցը. այժմ, եթէ երկուքը համընկնին, ո՞ր մաքսիմը պէտք է ընտրել կամ ո՞ր մէկուն պէտք է նախապատուութիւն տալ: Նման պարագայի մը առջեւ, Կանտ պատասխան չի հայթայթեր: Իսկ Սինգերի համաձայն, անհատը կրնայ առանց դժուարութեան վերոյիշեալ երկու մաքսիմները միատեղել ու Կանտի հետեւութեամբ նոր մաքսիմ մը կազմել, հետեւեալ բանաձեւով.- «*ի պահանջել հարկին, կարելի է ստել, մարդկային կեանք մը փրկելու համար*» ու այդ անհատը կարենայ ցանկալ, որ այդ ընդհանուր բարոյական օրէնք դառնայ:

Կանտի հանճարեղ փիլիսոփայական միտքն ու անոր որակաւոր երկերը բարձր կը գնահատուին. Նոյնիսկ, շատերու կողմէ պատկառանք կը տածուին՝ իրեն եւ իր գործերուն հանդէպ. այսուհանդերձ պէտք է հաստատել, որ նաեւ շահ՝ – շատեր մեծ դժուարութիւն ունին ըմբռնելու Կանտի գրականութիւնը, բան մը, որ աւելի քան 200 տարիներէ ի վեր տեղի տուած է բազմաթիւ քննարկումներու, վերլուծումներու ու քննադատութիւններու, որոնցմով կարելի է գրադարաններ լցնել:

